

ՀՏԴ 342.56

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐՆ ԱՆԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀԱՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

**Հոդվածը պատրաստվել է 18T-5E130 «խորհրդարանական կառավարման ձևի առկա հիմնախնդիրները» գիտական թեմայի շրջանակում:**

Հոդվածում անդրադարձ է կատարվել 2005 և 2015 թթ. սահմանադրական փոփոխություններով անկախ դատական իշխանության ձևավորման սահմանադրաիրավական հիմքերին և հաստատվում այն դիրքորոշումը, որ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով լայն հնարավորություններ են ստեղծվել դատական իշխանության անկախության, անաչառության, արդյունավետության ապահովման համար:

Սակայն, այնուամենայնիվ, անկախ դատական իշխանության ձևավորումը կախված է նաև պետական իշխանության օրինակաչությունից և առավելապես՝ խորհրդարանում իշխող քաղաքական կուսակցության կամաարտահայտությունից:

**Բանալի բառեր.** դատավոր, դատական իշխանություն, անկախության ապահովում, Բարձրագույն դատական խորհուրդ, իրավասություն, խորհրդարան:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգում դատական իշխանությունն ունի, այսպես կոչված, հավասարակշռող կամ կայունացնող դեր: Նման առաքելության իրականացման առաջնային նախադրյալը ոչ իրավաչափ ցանկացած ներգործությունից և միջամտությունից դատական իշխանության պաշտպանվածությունն է՝ դրա անկախության երաշխավորման տեսքով [1, էջ 37]:

Հանրապետական կառավարման բոլոր ձևերի պարագայում դատական իշխանության անկախության երաշխավորման կարևորությունը միևնույն կերպ է ընկալվում: Այսպես, եթե իշխանությունների բաժանման և հավասարակշռման տարբեր ձևաչափերի պարագայում օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի մասով օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև առկա է փոխազդեցության տարբեր դրսևորումներ, որոնք ապահովում են իշխանության այդ ճյուղերի բնականոն գործունեությունը, ապա դատական իշխանության մասով միանշանակ առաջադրվող պահանջը մեկն է՝ պետական իշխանության մարմինների հետ փոխհարաբերություններում ապահովել դատական իշխանության անկախության բավարար

երաշխավորվածության մակարդակ, որպեսզի դատարանները կարողանան անաչառ կերպով իրականացնել արդարադատությունը [2, էջ 178]:

Հայաստանի Հանրապետության նոր իրավաքաղաքական համակարգի ձևավորման և հետագայում դրա կայացման հիմքերը դրվեցին 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունած «Հայաստանի անկախության մասին» հռչակագրով: Հռչակագրի 9-րդ կետը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն. օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում, բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում» [3]: Այսպիսով, Հռչակագրի դրույթները և, հատկապես՝ իշխանությունների տարանջատման սկզբունքը, իրավական հիմք հանդիսացավ Հայաստանի անկախ պետականության շինարարության և ժողովրդավարական հասարակությանը հարիր նոր դատական համակարգի ձևավորման համար:

Արդեն 1991 թվականից սկսած՝ հանրապետության օրենսդրությունում կատարվեցին մի շարք փոփոխություններ, որոնք նպատակ էր Հռչակագրի դրույթների կենսագործումը, այդ թվում՝ դատավորների անկախությունն ապահովելը և դատարանների դերն ու հեղինակությունը բարձրացնելը: 1991 թվականի հուլիսի 1-ին «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերում և վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով՝ Հռչակագրի դրույթներին համապատասխան, 1961 թվականի քրեական օրենսգրքում կատարվեցին լրացումներ ու փոփոխություններ, պատասխանատվություն նախատեսվեց դատական գործերի լուծմանը միջամտելու, դատավորին կամ ժողովրդական ատենակալին վիրավորանք հասցնելու, դատավճիռը, վճիռը կամ որոշումը չկատարելու համար [4, հոդվ. 402]:

1995 թվականի հուլիսի 5-ի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց իշխանությունների տարանջատման սկզբունքը և Սահմանադրության 6-րդ գլուխն ամբողջությամբ նվիրվեց դատական իշխանությանը: Սահմանադրությամբ ամրագրվեցին անկախ և ինքնուրույն դատական իշխանության ձևավորման անհրաժեշտ նախադրյալները<sup>1</sup>: Սահմանադրությամբ նախատեսվում էր, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է իրավունքի գերակայությունը, արդարադատությունը՝ սահմանադրությամբ:

<sup>1</sup> Ի կատարումն սահմանադրական դրույթների իրականացման՝ ՀՀ Նախագահը 1996 թվականի նոյեմբերի 8-ին հրապարակեց «ՀՀ դատաիրավական բարեփոխումների մասին» հրամանագիրը, իսկ 1997 թվականի օգոստոսի 11-ին ստորագրեց «Դատաիրավական բարեփոխումների ծրագիրը»:

յանը և օրենքներին համապատասխան իրականացնում են միայն դատարանները: Արգելվում է արտակարգ դատարանների ստեղծումը, անձի կալանավորումը, բնակարանի խուզարկությունը և անձի սահմանադրական մի շարք իրավունքների սահմանափակում կարող է կատարվել միայն դատարանի միջոցով, դատական մարմինների անկախության երաշխավորը հանրապետության նախագահն է, դատական համակարգի կազմավորմանն ու գործունեությանը վերաբերվող մի շարք այլ կարևորագույն սկզբունքներ:

Դատական իշխանության անկախության գաղափարի զարգացման տեսակետից կարևոր էր նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատավորի՝ որպես դատական իշխանության կրողի, անկախության, անձեռնմխելիության և անփոփոխելիության սկզբունքը, որը բխում էր Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածի<sup>1</sup> և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների դաշնագրի 14-րդ հոդվածի<sup>2</sup> դրույթներից:

Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման և կայացման գործընթացի վրա էական ազդեցություն ունեցավ 2005 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեն, որով մի շարք փոփոխություններ կատարվեցին նաև Սահմանադրության «Դատական իշխանություն» գլխում: Այս փոփոխությունների հիմնական, առանցքային խնդիրներից էր դատական համակարգի կատարելագործումը, դատական իշխանության անկախության երաշխիքների ամրագրումը:

Ի տարբերություն նախորդ սահմանադրության, որում դատական մարմինների անկախության երաշխավորը Հանրապետության Նախագահն էր և գլխավորում էր արդարադատության խորհուրդը, 2005 թ. Սահմանադրության 94-րդ հոդվածում ամրագրվեց. «Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով»: Արմատապես փոփոխվեցին արդարադատության խորհրդի կազմը, ձևավորման կարգն ու լիազորությունները:

Եթե մինչև փոփոխությունները Արդարադատության խորհրդի բոլոր անդամներին նշանակում էր Հանրապետության Նախագահը, ապա փոփոխված Սահմանադրությամբ՝ ինը դատավոր անդամներն ընտր-

<sup>1</sup> Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր գործը քննվի հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ՝ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

<sup>2</sup> Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք:

վում էին դատավորների ընդհանուր ժողովի կողմից, իսկ չորս իրավաբան-գիտնականներից երկուսին նշանակում էր Հանրապետության Նախագահը, մյուս երկուսին՝ Ազգային ժողովը (Սահմանադրության 94.1 հոդված)»:

Այդպիսով՝ Արդարադատության խորհրդի կազմի մեջ այլևս ընդգրկված չէին Հանրապետության Նախագահը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, ինչպես նաև երեք դատախազ անդամները:

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությունը, ընդհանուր առմամբ, առաջընթաց ապահովեց անկախ դատական իշխանության ձևավորման տեսանկյունից: Առանցքային փոփոխության ենթարկվեց Արդարադատության խորհրդի կազմը, որում գործադիր իշխանության ներկայությունը խիստ նվազեց, սակայն, ընդհանուր առմամբ, լիովին չապահովվեց դատական իշխանության գործառնությանը և կառուցակարգային անկախության ապահովման բավարար երաշխիքներ, քանի որ այն կախված էր Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետությունից: Մինչդեռ Արդարադատության խորհրդի նիստերը հրավիրում և վարում էր Վճռաբեկ դատարանի նախագահը (Սահմանադրության 94.1 -րդ հոդված), ճիշտ է նշվում էր առանց քվեարկության իրավունքի, սակայն ՀՀ դատական օրենսգրքի 122-րդ հոդվածով վճռաբեկ դատարանի նախագահին իրավունք վերապահվեց հանդես գալ Արդարադատության խորհրդի անունից:

Վերը նշվածը, ինչպես նաև այն, որ Հանրապետության Նախագահին էր Արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում վճռաբեկ դատարանի նախագահին, վկայում են, որ Վճռաբեկ դատարանի նախագահը դե ֆակտո Արդարադատության խորհրդի նախագահն էր՝ ինչը նրան գործնականում տալիս էր ընդունվող որոշումների վրա ներազդելու հնարավորություն:

Բացի այդ, Սահմանադրությամբ բոլոր ատյանների դատավորների, դատարանների նախագահների նշանակման և նրանց լիազորությունների դադարեցման հարցում վերջնական իրավասությունը վերապահված էր Հանրապետության Նախագահին:

2005 թ. նոյեմբերի 27-ին սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետության կառավարման ձևն առավելապես համընկավ կառավարման կիսանախագահական ձևի խորհրդարանական-նախագահական ձևաչափին: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում հստակ տարանջատվեցին Հանրապետության Նախագահի, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունները,

սակայն, միևնույն ժամանակ, քաղաքական և իրավական մշակույթի ոչ բավարար մակարդակը, կուսակցական համակարգի կայացվածության ոչ բավարար աստիճանը գործնականում Հանրապետության Նախագահին հնարավորություն էին տալիս էականորեն ներագդելու դատական իշխանության կազմավորման և գործունեության վրա:

2013 թ. սկսվեց սահմանադրական բարեփոխումների հերթական փուլը, որի սկզբը դրվեց ՀՀ Նախագահի նույն թվականի սեպտեմբերի 4-ի ՆՀ-207-Ն «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» հրամանագրով [5], որում սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը հիմնավորվում էր իրավունքի գերակայության սկզբունքի իրականացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ:

ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի 2.6.2-րդ կետում նշվեց. «Սահմանադրական բարեփոխումների առաջնահերթ հայեցակարգային խնդիրներից մեկն անկախ, ինքնուրույն և օրենքի առջև հաշվետու դատական իշխանության կայացումն է: Այս առումով բարեփոխումների արդյունավետությունը կապվում է ոչ թե նոր ինստիտուտների ստեղծման, այլ արդեն կայացած կառույցների կատարելագործման հետ: Այս համատեքստում կարևորվում է Արդարադատության խորհրդի դերի և գործունեության արդյունավետության բարձրացումը: Սահմանադրական այս մարմինն առաջին հերթին պետք է ունենա կառուցակարգային անկախության այնպիսի մակարդակ, որով ապահովագրված կլինի ոչ իրավաչափ կամ հայեցողական ազդեցություններից: Բացի դրանից, Արդարադատության խորհրդին հարկ է օժտել սահմանադրական այնպիսի գործառույթներով, որոնցով այն ի զորու կլինի գործուն դեր կատարել դատական իշխանության անկախության ապահովման հարցերում: Այս առումով, ի թիվս այլնի, նոր իրավակարգավորման կարիք ունեն Արդարադատության խորհրդի ձևավորմանը, իշխանության այլ ինստիտուտների (Ազգային ժողովի, Հանրապետության Նախագահի, Կառավարության) հետ դրա փոխհարաբերություններին, ինչպես նաև այս մարմնի կազմին և լիազորությունների շրջանակին վերաբերող հարցերը» [1, էջ 39]:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով հատկապես շեշտադրվեց այն, որ միայն գործառույթային, կառուցակարգային, նյութական և սոցիալական անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է

երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր լինել:

Արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունները պահանջում էին այնպիսի կազմ, որ հնարավորություն կտար լիարժեքորեն իրականացնել իր լիազորությունները՝ չվտանգելով դատավորի անկախությունը և միաժամանակ բացառելով կորպորատիվ շահերը:

Այսինքն՝ խորհրդի կազմում դատավոր և ոչ դատավոր անդամների հարաբերությունից կախված՝ ոչ դատավոր անդամներն ունեին ազդեցության խիստ սահմանափակ հնարավորություններ որոշումների կայացման գործընթացում: Բացի այդ, չէր նախատեսվում նաև Արդարադատության խորհրդի անդամներին ներկայացվող պահանջներ, չկար խորհրդի անդամի պաշտոնում վերընտրվելու սահմանափակում:

Սահմանադրական փոփոխություններով դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու նպատակով ձևավորվեց նոր մարմին՝ Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետև՝ ԲԴԽ), որի կազմավորման կարգն ու լիազորությունները կարծես թե լուծում են վերը նշված խնդիրները: Միաժամանակ Սահմանադրության անցումային դրույթներում սահմանվեց, որ Արդարադատության խորհրդի անդամների լիազորությունները դադարում են, իսկ ԲԴԽ-ն իր լիազորությունները ստանձնում է Հանրապետության Նախագահի լիազորությունների ավարտման օրը:

«ՀՀ Սահմանադրության 174-րդ հոդվածով սահմանվում է. «1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից: 2. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ: 3. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր»:

Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվեց՝ ԲԴԽ-ն իր կազմից ընտրում է

խորհրդի նախագահ՝ հաջորդաբար Ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

Նման կարգավորումը կարծես թե լրացուցիչ երաշխիք է դատական իշխանության անկախության ապահովման, ինչպես նաև կուսակցական քաղաքականության և կորպորատիվ շահերի բացառման տեսանկյունից: Հարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովը նույնպես կարևորում է ԲԴԽ-ի նախագահի ընտրությունը՝ մատնանշելով, որ ԲԴԽ-ն պետք է նախագահի այնպիսի անձ, ով անկողմնակալ է և կաշկանդված չէ կուսակցական քաղաքականությամբ [6, p. 35]:

Սակայն, Դատական օրենսգրքի անցումային դրույթներում սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասով նախանշված հաջորդականությունը չպահպանելը, որն առավելապես պայմանավորված էր գործող իշխանության՝ նախընտրելի թեկնածուի համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ապահովմամբ, հիմք է տալիս եզրահանգելու, որ ԲԴԽ-ի նախագահի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված լինելու հանգամանքը դեռևս չի վկայում անկողմնակալ լինելու և կուսակցական քաղաքականությամբ կաշկանդված չլինելու մասին: Դատական իշխանության բավարար չափով անկախությունը կախված է նաև խորհրդարանում իշխող քաղաքական ուժի կամաարտահայտությունից:

Դատական իշխանության անկախության երաշխավորման հիմնական ուղղություններից էր նաև դատավորների կարգավիճակի որակական ամրապնդումը և, որպես այդ նպատակի իրականացման միջոց, դատավորների ընտրության և նշանակման, նրանց լիազորությունների դադարեցման, պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում տարբեր պետական մարմինների միջև լիազորությունների այնպիսի տարանջատումը, որն առավելագույնս կնպաստեր այդ մարմինների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգի արդյունավետությանը [7, էջ 189]:

2015 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվեցին դատավորների, դատարանների նախագահների, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման (ընտրության) տարբեր ընթացակարգեր: Այդպիսի մոտեցման առավելությունը նախևառաջ այն է, որ դատական համակարգի ձևավորման լիազորությունների ամբողջ համակարգն այլևս ապակենտրոնացված է: Ընդ որում՝ այդ ընթացակարգերի առանձնահատկությունն այն է, որ կոնկրետ անձը չի կարող ընտրվել դատավոր կամ դատարանի (պալատի) նախագահ միայն մեկ պետական մարմնի կամաարտահայտության դեպքում [8, ստր. 54]:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման (ընտրության) նախատեսված ձևաչափը երբեմն քննադատվում է՝ թիրախավորելով այն, որ նշանակման այս մեթոդները քաղաքականացման և իշխանական մյուս թևերից կախվածության վտանգ են պարունակում [9, պար. 33]: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կուսակցությունների կայացվածության աստիճանը և խորհրդարանական մշակույթի ձևավորած ավանդույթները՝ քաղաքականացման վտանգներ կարող են լինել: Չի բացառվում, որ Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության գործընթացը Ազգային ժողովում անհարկի քաղաքականացվի, արդյունքում՝ վերջիններիս ընտրությունն իրականացվի որոշակի քաղաքական կողմնորոշումների հաշվառմամբ:

Սակայն Վճռաբեկ դատարանի նախագահի ընտրության, ինչպես նաև ԲԴԽ-ի հինգ անդամների ընտրության իրավասությունը խորհրդարանին վերապահելն ունի նաև դրական կողմեր: Մասնավորապես, խորհրդարանական քվեարկությամբ նշանակումը, լրացուցիչ ժողովրդավարական օրինականություն է հաղորդում դատական իշխանությանը, բացի այդ, ժողովրդի համար առավել տեսանելի և վերահսկելի է դառնում դատական իշխանության ձևավորման գործընթացը, ինչն իր հերթին կարող է նպաստել դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

Փաստորեն կարելի է արձանագրել, որ անկախ դատական իշխանության ձևավորումը կախված է նաև պետական իշխանության օրինականությունից և առավելապես՝ խորհրդարանում իշխող քաղաքական կուսակցության կամաարտահայտությունից:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Երևան 2014:

2. **Կեսոյան Հ.**, Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում/ Մենագրություն, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2018:

3. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր 1990/Ն<sup>o</sup>16:

4. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1991/Ն<sup>o</sup> 18 (998):

5. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=91086>

6. [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)028-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)028-e): CDL-AD(2007)028, Judicial appointments // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007):

7. **Հ. Սրեփանյան**, Բարձրագույն դատական խորհրդի դերը դատական իշխանության անկախության ապահովման գործում, Հանրային կառավարում գիտական հանդես, Երևան, N 1/2019:

8. **А. Степанян**, Конституционно-правовые основы обеспечения независимости судебной власти в Республике Армения, Северо-Кавказский юридический вестник, N 1, 2019.

9. ԵԴԽԽ թիվ 1 (2001) կարծիք:

---

## РОЛЬ КОНСТИТУЦИОННЫХ ИЗМЕНЕНИЙ В ДЕЛЕ ФОРМИРОВАНИЯ НЕЗАВИСИМОЙ СУДЕБНОЙ ВЛАСТИ

АСМИК СТЕПАНЯН

---

*Академия государственного управления Республики Армения*

---

**Статья подготовлена в рамках научной темы 18Т-5Е130 “Актуальные вопросы в форме парламентского управления”**

В статье отражены конституционно-правовые основы формирования независимой судебной власти, обусловленные конституционными изменениями 2005 и 2015 гг, и утверждается та позиция, что конституционными изменениями 2015г. созданы широкие возможности для обеспечения независимости, объективности, эффективности судебной власти.

Но тем не менее, формирование независимой судебной власти зависит также и от легитимности государственной власти и в большей степени от волеизъявления политической партии, правящей в парламенте.

**Ключевые слова:** судья, судебная власть, обеспечение независимости, Высший судебный совет, юрисдикция, парламент.

## ROLE OF CONSTITUTIONAL AMENDMENTS IN THE FORMATION OF AN INDEPENDENT JUDICIARY

HASMIK STEPANYAN

---

*Public Administration Academy of the Republic of Armenia*

---

**The article has been designed in the framework of 18T-5E130 “The Current Issues of Parliamentary System”:**

The article touches upon the constitutional and legal grounds of the formation of an independent judiciary with the constitutional amendments made in 2005 and 2015 and confirms the position that the constitutional amendments of 2015 have granted wide opportunities to ensure the independence, objectivity and efficiency of the judiciary.

Nevertheless, the formation of an independent judiciary depends on the legitimacy of the state authorities and particularly the expression of the will of the political party in power in the parliament.

**Keywords:** judge, judicial power, securing independence, Supreme Judicial Council, competence, parliament.

Ներկայացվել է խմբագրություն 06.04.2020  
Երաշխավորվել է տպագրության 17.04.2020